

ՆԵՊԱԼԻ ԹԱԳԱՎՈՐԸ ԵՎ ԹԱԳՈՒՀԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 16-ին, երկուշաբթի օր, հետմիջօրեի ժամը 2-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Երևանում հյուր գտնվող Նեպալի թագավոր Նորին Մեծություն Մահենդրա Բիր Բիքրամ Շահ Դևան և Նորին Մեծություն թագուհի Ռաթհնա Ռաջիա Լաքշմի Դևի Շահը, ուղեկից բարձրաստիճան անձանց հետ։

Մայր Տաճարի զանգերի հանդիսավոր զողանջների տակ արքայական զույգը ժամանեց Մայր Աթոռ և առաջին հերթին այցելեց Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետին, որը Վեհարանում ընդունեց մեծանուն հյուրերին։

Արքայական զույգի այցելությանց մասնակցում էին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ Շ. Մ. Առուշանյանը, ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի Նախագահության Նախագահի տեղակալ Ջ. Մ. Վելիբեկովը, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության քարտուղար Ս. Հ. Ղևոնդյանը, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի մշտական հանձնաժողովների նախագահներ Գ. Հ. Ստեփանյանը, Գ. Ա. Արզումանյանը, Ռ. Բ. Ագիզոբեկյանը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը և ուրիշներ։

Մեծապատիվ հյուրերի հետ էին նաև Նեպալի թագավորին ընկերակցող պետական պաշտոնական բարձրաստիճան անձինք, որոնց թվում ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահի տեղակալ Շ. Ռ. Ռաշիդովը, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Ազգությունների Սովետի Նախագահի տեղակալ Կ. Կոնդուչալովան, ՍՍՌՄ Արտաքին գործերի մինիստրի տեղակալ Գ. Ն. Զարուբինը, Նեպալում ՍՍՌՄ դեսպան Պ. Կ. Պոնոմարենկոն, բանակի գեներալ Ի. Վ. Տյուլենևը, ՍՍՌՄ Արտգործմինիստրության Հարավ-Արևելյան Ասիայի երկրների բաժնի վարիչի տեղակալ Ֆ. Պ. Դոլյան, ՍՍՌՄ և Հայկական ՍՍՌ Արտգործմինիստրությունների պատասխանատու աշխատակիցներ։

Վեհարանում Վեհափառ Հայրապետի և Նեպալի թագավորի միջև տեղի ունեցավ ջերմ, սիրալիր զրույց։

Հյուրերը պատվասիրվեցին տուրճով։

Նեպալի թագավորը Մայր Աթոռի ոսկեմատյանում գրեց իր տպավորությունները։

Արքայական զույգը, իր շքախմբի հետ Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելուց հետո, այցելեց Մայր Տաճար, եղավ եկեղեցա-հնագիտական թանգարանում և դիտեց եկեղեցական սուրբ մատյանների հազվադյուտ հավաքածուն, հայկական ընտիր ձեռագրեր, ասեղնագործված սքանչելի շուրջառներ, վարագույրներ, եպիսկոպոսական խույրեր և գավազաններ։

Արքայական զույգը ջերմորեն դիմավորվեց վանքի բակում հավաքված բազմահազար հայ հավատացյալների կողմից։

Նույն օրը երեկոյան Վեհափառ Հայրապետը, գավազանակիր Տ. Մեսրոպ վարդապետ Մնթաբյանի ընկերակցությամբ, ներկա եղավ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ Շ. Մ. Առուշանյանի կողմից ի պատիվ Նեպալի թագավորի և թագուհու տրված հրաժեշտի ճաշկերույթին։